«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«20» հոկտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-40/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի 16.10.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը և բողոքն առանց քննության թողնելու մասին 20.10.2015թ. դիմումը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 16.10.2015թ. ներկայացված բողոքով «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից սերվերների ռեզերվային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ15/12-ՃՈ/ՍՌ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերի տեխնիկական բնութագիրը

կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության կոպիտ խախտումով և չի ստեղծում մրցակցության հավասար պայմաններ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 12-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ կետը, խնդրել է դադարեցնել ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար սերվերների ռեզերվային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/12-ՃՈ/ՍՌ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը (Ընթացակարգը հայտարարել չկայացած):

Կենտրոնին ներկայացված 20.10.2015թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է առանց քննության թողնել 16.10.2015թ. ներկայացված բողոքը՝ հաշվի առնելով ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից Ընթացակարգը չկայացած հայտարարելու հանգամանքը:

<u>2. ԳԲԽ-40/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի 20.10.2015թ. դիմումը, առաջարկում է՝ ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից սերվերների ռեզերվային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ15/12-ՃՈ/ՍՌ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 16.10.2015թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ՝ Լ. Հովակիմյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-40/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյան